ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

(ենթակա է քննարկման)

Ձեզ ենք ներկայացնում 2027թ.-ին Երևանում կայանալիք Սպորտային մարմնամարզության 12-րդ Եվրոպայ իտղամարդկանց և կանանց մեծահասակների առաջնության կազմակերպման համար անհրաժեշ տմիջոցառումների և աշխատանքների հերթականությունը՝ ըստ Եվրոպական Մարմնամարզության Միության հետ կնքված պայմանագրի դրույթների:

Սպորտային մարմնամարզության 12-րդ Եվրոպայի տղամարդկանց (MAG) կանանց (WAG), մեծահասակների առաջնության (այսուհետ՝ Առաջնություն) կազմակերպման համար անհրաժեշտ միջոցառումների ծավալը և բյուջեն կազմելու նպատակով ներկայացնում ենք պայմանագրի դրույթները և պահանջները՝ գերատեսչությունների կողմից իրականացվելիք աշխատանքների ծավալները հասկանալու, ինչպես նաև նման միջոցառումների կազմակերպման մասնագիտացում և փորձ ունեցող կազմակերպության/կազմակերպությունների հետ համագործակցելու համար:

Մանրամասները ստորև.

Եվրոպայի առաջնությունը կանցկացվի Երևանում 2027թ.-ին ապրիլ-մայիս ամիսներին նախապես հաստատված օրերին:

Ընդհանուր (մոտավոր) ծրագիրըհետևյալնէ.

Կիրակի	տղաների սպորտային մարմնամարզության տեխնիկական կոմիտեի և տղաների սպորտային մարմնամարզության մրցավարների ժամանում,
Շաբաթ	աղջիկների սպ. մարմնամարզության տեխնիկական կոմիտեի, մրցավարների և տղաների սպորտային մարմնամարզության պատվիրակների ժամանում, դատավորների ցուցումներ:
Կիրակի	տղաների մարզում մրցադահլիճում (podium training),
Երկուշաբթի	կողմնորոշիչ հանդիպում: Աղջիկների մարզում մարզադահլիճում

Երեքշաբթի	Տղաների որակավորման փուլ, որը կներառի նաև թիմային մեդալի որոշում: Աղջիկների մրցավարների ցուցումներ:
Չորեքշաբթի	Աղջիկների որակավորման փուլ, նաև թիմային մեդալի որոշում
Հինգշաբթի	բազմամարտի եզրափակիչ տղաների
Ուրբաթ	բազմամարտի եզրափակիչ աղջիկների:
Շաբաթ	առանձին գործիքների եզրափակիչ տղաներ և աղջիկներ
Կիրակի	առանձին գործիքների եզրափակիչ տղաներ և աղջիկներ
Երկուշաբթի	մեկնում

Կազմակերպիչ ֆեդերացիան առաջին քայլով պարտավորվում է ստեղծել **տեղական կազմակերպչական կոմիտե** (կազմված տարբեր ոլորտների մասնագետներից), որը պատասխանատու է այս միջոցառման համար: Տեղական կոմիտեի պատասխանատուները կամ նրանց պատվիրակները պետք է վարժ տիրապետեն անգլերենին և ողջ միջոցառման ընթացքում լինեն մրցման դահլիճում:

Կազմակերպիչ ֆեդերացիան (երկիրը) հոգում է առաջնության անցկացման բոլոր ծախսերը:

Կազմակերպիչ ֆեդերացիան հոգում է (նաև) պատվիրակության հետևյալ անդամների ճանապարհածախսը, ներառյալ վիզաների ծախսը, կացության ծախսերը՝ ԵՄ նախագահը կամ նրա ներկայացուցիչը (1 անձ), ԵՄ գլխավոր տնօրեն (1), ԵՄ սպորտի համակարգող (1), ԵՄ գործադիր կոմիտեի պատվիրակներ, ովքեր հանդես են գալիս որպես բողոքարկման ժյուրի (2), տղաների սպորտային մարմնամարզության տեխնիկական կոմիտեի նախագահ և անդամներ (7), աղջիկների սպորտային մարմնամարզության տեխնիկական կոմիտեի նախագահ և անդամներ (7), փորձագետ մրցավարներ (6) և մարզասարքերի վերահսկողներ (2) (անհրաժեշտության դեպքում) MAG , փորձագետ մրցավարներ WAG (4), ԵՄ ՋԼՄ-երի ղեկավար (1), ԵՄ պաշտոնական բժիշկ (1):

Կազմակերպիչ ֆեդերացիան ԵՄ վերոնշյալ պաշտոնական պատվիրակներին ապահովում է կացություն պաշտոնական հյուրանոցում՝ մեկտեղանի սենյակ պարտադիր ինտերնետ կապով: **ԵՄ-ն կտրամադրի անձանց ամբողջական ցուցակ** ներառյալ այն անձանց, ում ծախսը ֆեդերացիան չի հոգում, պաշտոնական հյուրանոցում տեղավորելու համար:

Միջոցառման անցկացման վայր է հաստատվել Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրը: Դահլիճների և մրցումային դահլիճի, ինչպես նաև բոլոր սենյակների ճշգրիտ չափերով հատակագծերը պետք է ներկայացվեն ԵՄ-ին

առաջին համակարգող հանդիպման ժամանակ: FIG-ի կանոնների համաձայն մարզման, մրցումային և նախամրցումային սրահների մարզասարքերի դասավորությունը և անվտանգության նորմերը պետք է կազմվեն մարզասարքերի մատակարարի հետ համագործակցությամբ:ԵՄ-ին պետք է տրվի նաև տեխնիկական կայանքների մասին ինֆորմացիա՝ լուսային ինտենսիվություն LUX, ձայնի, էկրանների և ցուցադրման տախտակների:Մարզագործիքները պետք է հաստատված լինեն FIG-ի կողմից:

Կարևոր. **Մրցման (1), նախամրցումային/տաքացման (1) և մարզումային (2) դահլիճների բոլոր մարզագործիքները պետք է լինեն նույնական (արտադրողի ապրանքանիշ և մոդել):**

Մարզագործիքների ծախսերը ստանձնում է ֆեդերացիան:

Մրցման դահլիճում պետք է լինեն՝MAG-ի և WAG-ի մարզագործիքների հավաքածու (8 մարզագործիք), վայրէջքի գորգեր/ մատ, մարզիկներին միշտ հասանելի՝ բոլոր մարզագործիքների մոտ դրված կավիճ, մարզիկների համար խմելու ջուր, երաժշտական համակարգ:

Նախամրցումային սրահում անհրաժեշտ է մեկ ամբողջական հավաքածու MAG-ի եWAG-ի համար, նաև հավելյալ նժույգ-թափեր և զուգափայտ (MAG), գերան և զուգափայտ (WAG), նաև վայրէջքի/անվտանգության գորգեր:

Մարզումների սրահը պետք է լինի մրցումային սրահի նույն կառույցի մեջ, որպես հավելյալ տարբերակ կարող է լինել մրցումային սրահի մոտ գտնվող այլ կառույցի մեջ: Մարզումային սրահում անհրաժեշտ են . մարզագործիքների 2 ամբողջական հավաքածու՝ հավելյալ նժույգ թափեր և զուգափայտ MAG-ի համար, երկու ամբողջական հավաքածու՝ հավելյալ գերան և զուգափայտ WAG-ի համար, վայրէջքի մատեր, մարզիկների և պատվիրակների համար խմելու ջուր,մարզիկներին հասանելի կավիճ, երաժշտական համակարգ WAG-ի համար:

Հեռարձակումը գերկարևոր դեր ունի միջոցառման կազմակերման մեջ: Ազգային հեռարձակողը, որը միջոցառման հիմնական լուսաբանողն ու մեկնաբանն է, պետք է իրականացնի մրցման օրերի որակյալ հեռարձակման ձևաչափի բոլոր ակնկալիքները: Հեռարձկողը պետք է **ներկա լինի տեղական կոմիտեի ժողովներին**, որ բոլոր կազմակերպչական հարցերը քննարկվեն և հաստատվեն ԵՄ-ի կողմից:

Հաշվի առնելով միջոցառման կազմակերպչական աշխատանքների հսկայական ծավալները՝ մի շարք հարցերի և գործառությունների քննարկումներ և որոշումների կայացումը տեղի է ունենալու Մարմնամարզության Եվրոպական Միության և Հայաստանի Մարմնամարզության Ֆեդերացիայի միջև սպասվելիք համակարգող հանդիպումների ժամանակ:

Տեղեկացնում ենք, որ հավելյալ մանրամասներ Ձեզ կտրամադրենք յուրաքանչյուր համակարգող հանդիպման ընթացքում քննարկումների արդյունքում ձեռք բերված որոշումների հիման վրա, որոնք կներառեն ամբողջական մանրամասն ինֆորմացիա կապված հետևյալ կետերի հետ. Առաջնության բացման և փակման հանդիսավոր արարողություն, բանկետ, տեխնիկական հագեցվածության

ապահովում, տրանսպորտային ծառայություններ, սպասարկման այլ ծառայություններ, բրենդավորում, գովազդային ծառայություններ, տոմսերի վաճառք, սոցիալական ցանցերում ռազմավարական կոնցեպտի մշակում, թարգմանչական ծառայություններ, թալիսմանի որոշում, հուշանվերների մասին տեղեկություններ/վաճառքի կազմակերպում, մեդալների քանակ, պատվոգրեր, հյուրանոցային ծառայություններ, սննդի ապահովում, դոպինգ թեստավորման մանրամասներ *և այլն:*

Ի լրումն տեղեկացնում ենք, որ կազմակերպչական աշխատանքների լիարժեքության նպատակով նախատեսվում է անցկացնել համակարգող հանդիպումներ (ըստ ՄարմնամարզությանԵվրոպական Միության հետ կնքած պայմանագրի դրույթների)՝ առնվազն 4-ը՝ և՛ Հայաստանում, և՛ արտերկրում: ՀՄՖ-ի կազմկոմիտեն (ողջ թիմը) պետք է մեկնի և ներկա գտնվի 2027թ.-ին նախորդող Սպորտային մարմնամարզությանԵվրոպայիԱռաջնության կազմակերպչական աշխատանքների սկզբնական փուլից՝ մանրամասնորեն ծանոթանալու կազմակերպչական աշխատանքների, միջոցառման անցկացման մանրամասներին՝ որպես փորձի փոխանակում:

Վերոնշյալ բոլոր ծախսերը հոգում է կազմակերպիչ ֆեդերացիան և/կամ երկիրը:

ՀՄՖ ՆԱԽԱԳԱՀ Գ.ՎԱՆՈՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ս.ԱՆՏՈՆՅԱՆ